Մրցակցություն և պետական աջակցություն

1. Ընկերություններին վերաբերող մրցակցության կանոններ

Ներածություն

Ընկերությունների գործունեության կանոնների բնագավառում ՀՀ օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը. բացառություն են կազմում գերիշխող դիրքի չարաշահման, համակենտրոնացումների պարտադիր հայտարարագրման պահանջի, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին տեղեկատվության ներկայացման, տեղեկատվության պահպանման հետ կապված հարցերը, որոնց մասով առկա է լրիվ համապատասխանություն:

Ընկերությունների գործունեության կանոնների բնագավառում Եվրամիության օրենսդրությունը սահմանում է ընկերությունների միջև մրցակցության հիմնական սկզբունքները, կարգավորում է համակենտրոնացումների հետ կապված հիմնախնդիրները և առաջարկում է համապատասխան մեխանիզմներ հակամրցակցային համաձայնությունների վերահսկման ուղղությամբ: Հիշյալ հիմնախնդիրները ՀՀ-ում կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (5-րդ և 62-րդ գլուխները,[1]) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (8-րդ գլուխը,[2]) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»[3], «Բաժնետիրական ընկերությունների մասին»[4] ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ընդունած հետևյալ նորմատիվ գերատեսչական ակտերով. «Ապրանքային շուկաների սահմանների և ծավալների որոշման մասին»[5], «Ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտի գերիշխող դիրքի որոշման կարգը հաստատելու մասին»[6], «Իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված (արհեստական) գնի որոշման մասին»[7], «Հակամրցակցային համաձայնությունների որոշման մասին» որոշումներով[8]:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ընկերությունների գործունեության կանոնների բնագավառում առկա անհամապատասխանությունները հիմնականում բացատրվում են այն հանգամանքով, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ոչ հանգամանալից են արտացոլված այն կարևորագույն հիմնահարցերը, որոնք ԵՄ-ում կարգավորվում են առանձին կանոնակարգերով: Մասնավորապես, ՀՀ-ում առկա չէ համակենտրոնացումների կարգավորմանը վերաբերող առանձին նորմատիվ իրավական ակտ (օրենք), որով հստակորեն կկարգավորվեն համակենտրոնացումների հետ կապված հիմնախնդիրները[9]: Առկա չէ համակենտրոնացումներին վերաբերող օրենսդրության կիրարկման հետ կապված առանձին նորմատիվ իրավական ակտ[10]: Հստակ չեն սահմանվում հակամրցակցային համաձայնությունների տեսակները և դրանց հետ կապված հիմնախնդիրները[11]: Առկա չեն տնտեսավարող սուբյեկտների միջև որոշ տեսակի համաձայնությունների վերաբերյալ առանձին նորմատիվ իրավական ակտեր[12]: Ստուգման իրավունքի բացակայությունը սահմանափակում է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակը:

---

[1] ՀՕ-239, 05.05.1998թ.:
[2] ՀՕ-247, 17.06.1998թ.:
[3] ՀՕ-112, 06.11.2000թ.:
[4] ՀՕ-232, 25.09.2001թ.:
[5] Թիվ 24, 04.03.2002թ.:
[6] Թիվ 27, 04.03.2002թ.:
[7] 62-Ն, 09.07.2003թ.:
[8] 122-Ն, 01.09.2004թ.:
[9] 2004թ. հունվարի 20-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 139՝ «Տնտեսավարող սուբյեկտների միջև համակենտրոնացումների վերահսկման վերաբերյալ»:
[10] 2004թ. ապրիլի 7-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 802՝ «Տնտեսավարող սուբյեկտների միջև համակենտրոնացումների վերահսկման վերաբերյալ Խորհրդի N 139/2004 կանոնակարգի իրականացման վերաբերյալ»:
[11] 1965թ. մարտի 2-ի կանոնակարգ թիվ 19՝ «Որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման վերաբերյալ», 1971թ. դեկտեմբերի 20-ի կանոնակարգ թիվ 2821՝ «Որոշ կարգի համաձայնություններին, որոշումներին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման վերաբերյալ», 1999թ. դեկտեմբերի 22-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2790՝ «Որոշ կարգի ուղղահայաց համաձայնություններին, որոշումներին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման վերաբերյալ»:
[12] 2002թ. հուլիսի 31-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 1400՝ «Ավտոմոբիլաշինության ոլորտում ուղղահայաց համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման վերաբերյալ», 1991թ. մայիսի 31-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 1534՝ «Ապահովագրության ոլորտում որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման ,2000թ. նոյեմբերի 29-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2659՝ «Հետազոտություններին և զարգացումներին առնչվող որոշ կարգի համաձայնություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման վերաբերյալ», 2003թ. փետրվարի 27-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 358՝ «Ապահովագրության ոլորտում որոշ կարգի համաձայնություններին, որոշումներին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման վերաբերյալ», 2000թ. նոյեմբերի

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Ընկերություններին վերաբերող մրցակցային կանոններ» ենթագլուխը 2006-2008թթ. ընթացքում ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Տնտեսությունում համակենտրոնացումների արդյունավետ կարգավորման նպատակով ՀՀ-ում կընդունվի տվյալ բնագավառը կանոնակարգող նոր օրենք: Այն կմշակվի ԵՀ 2004թ. հունվարի 20-ի թիվ 139 կանոնակարգի հիման վրա, որը մանրամասնորեն անդրադառնում է ԵՄ-ում համակենտրոնացումների պետական կարգավորման հիմնախնդիրներին: Նոր ընդունված նորմատիվ իրավական ակտի իրականացումն ապահովելու համար ՏՄՊՊՀ-ն կմշակի որոշման նախագիծ, որի դրույթները համահունչ կլինեն ԵՀ 2004թ. ապրիլի 7-ի թիվ 802 կանոնակարգի հիմնական սկզբունքներին:

Կարևորելով Հայաստանում տնտեսական մրցակցության պաշտպանության դերը տնտեսության հետագա զարգացման գործում՝ նախատեսվում է լրացումներ և փոփոխություններ կատարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում՝ համապատասխան ԵՀ 2003թ. դեկտեմբերի 16-ի կանոնակարգի դրույթներին, որը սահմանում է ԵՄ-ում կիրառվող մրցակցության պաշտպանության հիմնական սկզբունքները:

2008 թվական

Տնտեսավարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների վերահսկման և ուղղահայաց համաձայնությունների կարգավորման նպատակով կմշակվի նոր օրենք, որը կհամապատասխանեցվի ԵՀ 1965թ. մարտի 2-ի թիվ 19 և 1971թ. դեկտեմբերի 20-ի թիվ 2821 կանոնակարգերին:

Այս համատեքստում հիշյալ նորմատիվ իրավական ակտերի արդյունավետ կիրարկման համար ՏՄՊՊՀ-ին կտրվի ստուգման իրավասություն:

2009 թվական

Տնտեսության տարբեր ճյուղերում և գործունեության տարբեր բնագավառներում տնտեսավորող սուբյեկտների միջև կնքվող համաձայնությունները կկարգավորվեն ՏՄՊՊՀ-ի ընդունած որոշումներով, որոնք մասնավորապես կվերաբերեն հետազոտություններին և զարգացումներին, մասնագիտացմանը և ապահովագրության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների միջև կնքվելիք համաձայնություններին: Նշված որոշումները կմշակվեն ԵՀ 2000թ. նոյեմբերի 29-ի թիվ 2659, 2000թ. նոյեմբերի 29-ի թիվ 2658, 1991թ. մայիսի 31-ի թիվ 1534 և 2003թ. փետրվարի 27-ի թիվ 358 կանոնակարգերին համապատասխան:

29-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 2658՝ «Մասնագիտացման որոշ կարգի համաձայնություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման վերաբերյալ»:

1.1.Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/ օր)	Տեխնիկական աջակցություն
2007						
1.	«Տնտեսավարող սուբյեկտների միջև համակենտրոնացումների վերահսկման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2004թ. հունվարի 20-ի «Տնտեսավարող սուբյեկտների միջև համակենտրոնացումների վերահսկման մասին» Խորհրդի թիվ 139 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	63	Խորհրդատվություն,նախնական փորձաքննություն
2.	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2003թ. դեկտեմբերի 16–ի «ԵՄ դաշնագրի 81 և 82 –րդ հոդվածներում արծարծված մրցակցության կանոնների իրականացման մասին» Խորհրդի կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	54	Նախնական փորձաքննություն
3.	«Տնտեսավարող սուբյեկտների միջև համակենտրոնացումների վերահսկման մասին» ՀՀ օրենքի դրույթների իրականացման մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	2004թ. ապրիլի 7-ի «Տնտեսվարող սուբյեկտների միջև համակենտրանցումների վերահսկման վերաբերյալ Խորհրդի թիվ 139/2004 կանոնակարգի իրականացման մասին» Խորհրդի թիվ 802 կանոնակարգ:	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	2-րդ եռամսյակ	42	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					159	
2008						

4.	«Տնտեսավարող սուբյեկտների միջև համաձայնությունների և համաձայնեցված գործողությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1965թ. մարտի 2-ի «Որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման մասին» թիվ 19 կանոնակարգ 1971թ. դեկտեմբերի 20-ի «Որոշ կարգի համաձայնություններին, որոշումներին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման մասին» թիվ 2821 կանոնակարգ	ՀՀ առեւտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն,նախնական փորձաքննություն
5.	«Տնտեսավարող սուբյեկտների միջև որոշ կարգի ուղղահայաց համաձայնությունների մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	1999թ. դեկտեմբերի 22-ի «Որոշ կարգի ուղղահայաց համաձայնություններին, որոշումներին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 2790 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	2-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**30**	
2009						
6.	«Հետազոտություններին և զարգացումներին առնչվող որոշ կարգի համաձայնությունների, որոշումների և համաձայնեցված գործողությունների մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	2000թ. նոյեմբերի 29-ի «Հետազոտություններին և զարգացումներին» առնչվող որոշ կարգի համաձայնություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 2659 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՀՀ կրթության և գիտության նախարարություն)	1-ին եռամսյակ	18	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

7.	«Մասնագիտացմանն առնչվող որոշ կարգի համաձայնությունների, որոշումների և համաձայնեցված գործողությունների մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	2000թ. նոյեմբերի 29-ի «Մասնագիտացման որոշ կարգի համաձայնությունների» վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 2658 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
8.	«Ապահովագրության ոլորտին առնչվող որոշ կարգի համաձայնությունների, որոշումների և համաձայնեցված գործողությունների մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	1991թ. մայիսի 31-ի «Ապահովագրության ոլորտում որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման մասին» Խորհրդի թիվ 1534 կանոնակարգ 2003թ. փետրվարի 27-ի «Ապահովագրության ոլորտում որոշ կարգի համաձայնություններին, որոշումներին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 81(3) կետի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 358 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	27	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					60	
					249	

1.2.Ինստիտուցիոնալ կարողություններ[13]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության վերաբերյալ դասընթացներ (2007թ. 2 օր)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում համակենտրոնացումների կարգավորման վերաբերյալ դասընթացներ (2007թ .5 օր)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	ՀՀ տնտեսական դատարան	-	Տնտեսական մրցակցության տեսական հիմքերի վերաբերյալ դասընթացներ (2007թ. 3 օր)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	Վերահսկման ստորաբաժանման ստեղծում	ԵՄ-ում մրցակցության օրենսդրության խախտման դեպքերի հայտնաբերման նպատակով ստուգումների իրականացման վերաբերյալ դասընթացներ (2007թ. 5 օր)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	Եվրամիությունում համաձայնությունների և համաձայնեցված գործողությունների կարգավորման վերաբերյալ դասընթացներ (2008թ. 3 օր)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

[13] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

2. Հատուկ ոլորտներին վերաբերող մրցակցության կանոններ

Ներածություն

Առանձին ոլորտներին վերաբերող կանոններին առնչվող ՀՀ օրենսդրությունը գրեթե լիովին չի համապատասխանում ԵՄ օրենսդրությանը: Բացառություն են կազմում Հանձնաժողովի իրավասությունների շրջանակից բխող գործողությունները:

Հատուկ ոլորտներին վերաբերող մրցակցային կանոնների բնագավառում Եվրամիության օրենսդրությունը սահմանում է տնտեսության տարբեր ոլորտներում մրցակցության պաշտպանության հիմնական սկզբունքները: Խնդրո առարկան ՀՀ-ում մասնակիորեն կարգավորում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին»[14] և «Հակագնագցման (հակադեմփինգային) փոխհատուցման միջոցների մասին»[15] ՀՀ օրենքները:

Հիմք ընդունելով համեմատական վերլուծության արդյունքները՝ պետք է նշել, որ այս բնագավառում ԵՄ օրենսդրությանը ՀՀ օրենսդրության անհամապատասխանության հիմնական պատճառներից մեկն այն է, որ սույն ենթագլխի համատեքստում հիշյալ ոլորտներին վերաբերող ՀՀ օրենսդրական դաշտը գրեթե լիովին բաց է: Այնինչ Եվրամիությունը կարգավորում է առանձին ոլորտներում մրցակցության «խաղի կանոնները»[16]:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Հատուկ ոլորտներին վերաբերող մրցակցության կանոններ» ենթագլուխը 2006-2008թթ. ընթացքում ամբողջովին համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2007 թվական

Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտներում մրցակցային կանոնների սահմանման նպատակով ՏՄՊՊՀ-ն կմշակի նոր որոշման նախագիծ, որի հիմքում ընկած կլինեն ԵՀ 1968թ. հուլիսի 29-ի թիվ 1017 կանոնակարգի սկզբունքները:

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վաճառքի ոլորտում մրցակցության կարգավորման համար ՏՄՊՊՀ-ն կմշակի համապատասխան որոշման նախագիծ, որի հիմնադրույթները համահունչ կլինեն ԵՀ 1965թ-ի թիվ 26 կանոնակարգի դրույթներին:

2009 թվական

Օդային տրանսպորտի բնագավառում համաձայնեցված գործողությունները կարգավորելու նպատակով ՀՀ կառավարությունը կներկայացնի որոշման նոր նախագիծ, որն ընդհանուր առմամբ կհամապատասխանի ԵՀ 1987թ. դեկտեմբերի 14-ի թիվ 3976 և 1993թ. հունիսի 25-ի թիվ 1617 կանոնակարգերի դրույթներին:

---

[14] ՀՕ-112, 06.11.2000թ.:

[15] ՀՕ-385, 19.06.2002թ.:

[16] 1987թ. դեկտեմբերի 14-ի Խորհրդի կանոնակարգ թիվ 3976՝ «Օդային տրանսպորտի ոլորտում որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման վերաբերյալ», 1993թ. հունիսի 25-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 1617՝ «Օդանավակայաններում համատեղ պլանավորման, չվացուցակների համակարգման, համատեղ գործողությունների, բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների սակագների վերաբերյալ խորհրդատվությունների համար որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման վերաբերյալ», Կանոնակարգ թիվ 26՝ «Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վաճառքի ոլորտում մրցակցության կանոններն արտահայտելու վերաբերյալ», 1968թ. հուլիսի 19-ի կանոնակարգ թիվ 1017՝ «Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտում մրցակցության կանոնների վերաբերյալ»:

2.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2007			
1.	«Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտում մրցակցության կանոնների մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	1968թ. հուլիսի 19-ի «Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտում մրցակցության կանոնների մասին» թիվ 1017 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն
2.	«Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վաճառքի ոլորտում մրցակցության կանոնների մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	«Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության և վաճառքի ոլորտում մրցակցության կանոնները սահմանելու մասին» թիվ 26 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն
			ԸՆԴԱՄԵՆԸ		30	
			2009			
3.	«Օդային տրանսպորտի բնագավառում որոշ կարգի համաձայնությունների և համաձայնեցված գործողությունների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1987թ. դեկտեմբերի 14-ի «Օդային տրանսպորտի ոլորտում որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, ՀՀ տնտեսական	2-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն

		85(3) կետի իրականացման մասին» Խորհրդի թիվ 3976 կանոնակարգ 1993թ. հունիսի 25-ի «Օդանավակայաններում համատեղ պլանավորման, չվացուցակների կոորդինացման, համատեղ գործողությունների, բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների սակագների վերաբերյալ խորհրդատվությունների համար որոշ կարգի համաձայնություններին և համաձայնեցված գործողություններին վերաբերող ԵՄ դաշնագրի 85(3) կետի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 1617 կանոնակարգ	մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնակցությամբ)			
					15	

2.2. Ինստիտուցիոնալ կարողություններ[17]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ-ը փորձը տնտեսության տարբեր ճյուղերում մրցակցային կանոնների մշակման և կիրառման վերաբերյալ դասընթացներ (2007թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում
2.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	-	ԵՄ-ում օդային տրանսպորտի բնագավառում համաձայնությունների և համաձայնեցված գործունեության վերաբերյալ դասընթացներ (2009թ.)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում

[17] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ

3. Պետական աջակցություն

Ներածություն

ՀՀ-ում տնտեսական մրցակցության տեսանկյունից պետական աջակցությանը վերաբերող որևէ նորմատիվ իրավական ակտ գոյություն չունի: ՀՀ-ում առկա բոլոր նորմատիվ իրավական ակտերը պետական աջակցությունը չեն դիտարկում մրցակցության համատեքստում: Հիմնական տարբերությունը նրանում է, որ ԵՄ-ում պետական աջակցություն ասելով՝ հիմնականում հասկացվում է աջակցություն տնտեսավորող սուբյեկտներին, այնինչ ՀՀ-ում պետական աջակցությունը հիմնականում վերաբերում է ֆիզիկական անձանց: Որոշ բացառություն այս առումով կարող է ներկայացնել փոքր և միջին ձեռնարկատիրությանը վերաբերող պետական աջակցությունը, բայց այն նույնպես չի դիտարկվում մրցակցության համատեքստում: Հաշվի առնելով վերը նշվածը՝ ստորև ներկայացված են ՀՀ այն նորմատիվ իրավական և գերատեսչական ակտերը, որոնք թեկուզ անուղղակի (մրցակցության տեսանկյունից), այնուամենայնիվ, առնչվում են պետական աջակցության հետ:

Պետական աջակցության բնագավառում Եվրամիության օրենսդրությունը կարգավորում է տնտեսավարող սուբյեկտներին պետության կողմից տրվող աջակցությունը՝ տնտեսությունում հավասար մրցակցային պայմանների պաշտպանության համատեքստում: ՀՀ-ում պետական աջակցությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերը հետևյալն են՝ «Տրանսպորտի մասին»[18], «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին»[19], «Բնակչության զբաղվածության մասին»[20], «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանվածության մասին»[21], «Բյուջետային համակարգի մասին»[22], «Հաշվապահական հաշվառման մասին»[23], «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»[24] ՀՀ օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտեր:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Պետական աջակցություն» ենթագլուխը մինչև 2009 թվականը ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

2006 թվական

Պետական աջակցությունն առավել թափանցելի դարձնելու նպատակով փոփոխություններ կկատարվեն «Բյուջետային համակարգի մասին» և «Ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներում՝ դրանք համապատասխանեցնելով ԵՀ 1980թ. հունիսի 25-ի թիվ 723 դիրեկտիվի դրույթներին:

2007 թվական

Հայաստանի Հանրապետությունում տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցության կարգավորման նպատակով կընդունվի նոր օրենք, որը կմշակվի ԵՀ 1999թ. մարտի 22-ի թիվ 659 կանոնակարգին համապատասխան: ՏՄՊՊՀ-ն կմշակի նաև որոշման նախագծեր, որոնք միտված կլինեն ապահովելու հիշյալ օրենքի իրականացումը: Այդ որոշումների դրույթները հիմնականում կբխեն ԵՀ 1999թ. ապրիլի 21-ի թիվ 794, 1998թ. մայիսի 7-ի թիվ 994 և 2001թ. հունվարի 12-ի թիվ 69 կանոնակարգերի սկզբունքներից:

Հաշվի առնելով ՀՀ-ում ՓՄՁ-ների զարգացման կարևորությունը՝ կառավարությունը կառաջարկի օրենքի նոր նախագիծ, որը կկանոնակարգի պետական աջակցությունը այդ բնագավառում: Օրենքի մշակման հիմք կհանդիսանա ԵՀ 2001թ. հունվարի 12-ի թիվ 70 կանոնակարգը:

2008 թվական

Կրթության (վերապատրաստման), զբաղվածության բնագավառում պետական աջակցությունը կկարգավորի նոր մշակված օրենքը, որի հիմքում դրված կլինեն ԵՀ 2001թ. թիվ 68 և 2002թ. դեկտեմբերի 12-ի թիվ 2204 կանոնակարգերի սկզբունքները:

---

[18] ՀՕ-201, 03.02.1998թ.:
[19] ՀՕ-121, 05.12.2000թ.:
[20] ՀՕ-93, 03.12.1996թ.:
[21] ՀՕ-57, 24.05.1993թ.:
[22] ՀՕ-137, 24.06.1997թ.:
[23] ՀՕ-515, 26.12.2002թ.:
[24] ՀՕ-248, 23.10.2001թ.:

2009 թվական

Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտում պետական աջակցության կարգավորման նպատակով կմշակվի նոր օրենքի նախագիծ՝ 1970թ. հունիսի 4-ի թիվ 1107 ԵՀ կանոնակարգի հիման վրա:

3.1. Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	• «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքնքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1980թ. հունիսի 25-ի «ԵՄ անդամ պետությունների և պետական իրավաբանական անձանց միջև, ինչպես նաև տարբեր տնտեսվարող սուբյեկտների միջև ֆինանսական հարաբերությունների թափանցելիության մասին» Հանձնաժողովի թիվ 723 դիրեկտիվ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն
		ԸՆԴԱՄԵՆԸ			15	
			2007			
2.	«Տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով պետական աջակցության վերահսկման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1999թ. մարտի 22-ի «ԵՄ դաշնագրի 93 կետի դրույթների իրականացման կանոնների մասին» Խորհրդի թիվ 659 կանոնակարգ	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ)	3-րդ եռամսյակ	18	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	«ՓՄՁ-ների պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2001թ. հունվարի 12-ի «ՓՄՁ-րի պետական աջակցությանը վերաբերող ԵՄ դաշնագրի 87 և 88	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն	4-րդ եռամսյակ	18	Նախնական փորձաքննություն

		կետերի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 70 կանոնակարգ	(ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ)			
4.	«Տնտեսական մրցակցության պաշտպանության նպատակով պետական աջակցության վերահսկման մասին» ՀՀ օրենքի դրույթների իրականացումն ապահովելու մասին» ՀՀ ՏՄՊՊՀ-ի որոշման նախագծի մշակում	2004թ.ապրիլի 21-ի «Խորհրդի թիվ 659/1999 կանոնակարգի իրականացումն ապահովող ԵՄ դաշնագրի 93 կետի դրույթները սահմանելու մասին» Հանձնաժողովի թիվ 794 կանոնակարգ 1998թ. մայիսի 7-ի «Պետական հորիզոնական աջակցության որոշ տեսակներն արտահայտող ԵՄ դաշնագրի 92 և 93 կետերի իրականացման մասին» Խորհրդի թիվ 994 կանոնակարգ 2001թ. հունվարի 12-ի «Պետական աջակցության նվազագույն չափին վերաբերող ԵՄ դաշնագրի 87 և 88 կետերի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 69 կանոնակարգ	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	4-րդ եռամսյակ	66	Նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**102**	
2008						
5.	«Կրթության/վերապատրաստման, զբաղվածության բնագավառներում պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	2001թ. հունվարի 12-ի «Կրթության պետական աջակցությանը վերաբերող ԵՄ դաշնագրի 87 և 88 կետերի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության	1-ին եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		68 կանոնակարգ 2002թ. դեկտեմբերի 12-ի «Զբաղվածության պետական աջակցությանը վերաբերող ԵՄ դաշնագրի 87 և 88 կետերի իրականացման մասին» Հանձնաժողովի թիվ 2204 կանոնակարգ	պետական հանձնաժողովի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ)			
ԸՆԴԱՄԵՆԸ					**30**	
2009						
6.	«Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտում պետական աջակցության տրամադրման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1970թ. հունիսի 4-ի «Երկաթուղային, ավտոմոբիլային և ներքին ջրուղիների տրանսպորտի ոլորտում պետական աջակցության տրամադրման մասին» թիվ 1107 կանոնակարգ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն (ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**15**	

3.2. Ինստիտուցիոնալ կարողություններ[25]

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	-	ԵՄ-ում պետական աջակցության հիմունքների վերաբերյալ դասընթաց (2007թ. 4 օր, 2008թ 3 օր)	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն, վերապատրաստում

[25] Օրենսդրական համապատասխանության աշխատանքների համակարգման նպատակով սույն ենթագլխում նշված պատասխանատու նախարարությունների և գերատեսչությունների կազմում կստեղծվեն ԵՄ ինտեգրացման համապատասխան ստորաբաժանումներ